Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
Ծրագրի անունը՝ «Վեդիի ջրամբարի և Ոռոգման համակարգի կառուցում»
Պայմանագրի անունը՝ «Համակարգիչների և այլ սարքավորումների գնում ՀՏՋՀ ՋՏԾԻՄ-ի համար»
ԳՀ No. AFD/G/DC-22/001

Գնանշման Հրավերի (ԳՀ) պարզաբանումներ և պատասխաններ №1

Մասնակցի/Մատակարարի կողմից բարձրացված հարց(եր)	Գնորդի պատասխան(ներ)
Պարզաբանումներ և պատասխաններ №1	
Ամսաթիվ՝ 2022թ. հունվարի 14	**Ամսաթիվ՝ 2022թ.հունվարի 14**
Հարց 1. Կարո՞ղ է գնման ընթացակարգին մասնակցել 2020թ օգոստոս ամսին ստեղծված կազմակերպությունը, որն ունի հրավերով պահանաջվող շրջանառություն և համանման 2 և ավելի նմանատիպ ապրանքների մատակարարման պայմանագրի պատշաճ կատարման փորձ: Կա արդյո՞ք նմանատիպ ապրանքների մատակարարման պայմանագրի գումարի նկատմամբ որևէ պահանջ:	- Այո, կարող է: - Նմանատիպ ապրանքների (համակարգիչներ, գրասենյակային սարքավորումներ և այլն) մատակարարման պայմանագրի գումարի նկատմամբ որևէ պահանջ դրված չէ:
Հարց 2. Ապրանքների նկատմամբ սահմանված պահանջները պետք է՞ հասկանալ առնվազն այդպիսի, թե՞ հենց այդպիսին: Այսինքն կարող ե՞ն պահանջվածին գերազանցող բնութագրերով լինել;	- Ապրանքների նկատմամբ սահմանված պահանջները պետք է հասկանալ **«առնվազն»** այդպիսին (կամ բարձր)
Հարց 3. Պահանջվող համակարգչի (1-ին ապրանք) բնութագրերում նշված "Աուդիո համակարգ/Audio: USB, 1.6Վտ" պահանջը նշանակաում է՞ բարձրախոսի առկայություն 1,6վտ հզորությամբ, թե 1 հատ 6վտ հզորությամբ:	- Պետք է հասկանալ «1,6վտ հզորությամբ», ոչ թե 1 հատ 6վտ հզորությամբ

<u>Հարց 4.</u> 2-րդ ապրանքի էկրանի պատկերի տեսանելի չափսը կարող է՞ 21,5" լինել;	- 2-րդ ապրանքի էկրանի պատկերի տեսանելի չափսը պետք է լինի **«առնվազն 22"»**
<u>Հարց 5.</u> 3-4 ապրանքների տեսաքարտերը կարող ե՞ն պրոցեսորի մեջ ներդրվածը լինել:	- Այո
<u>Հարց 6.</u> 5-րդ ապրանքի նկատմամբ "850VA" պահանջը կարծում ենք ելքային հզորությանն է վերաբերվում.	- Այո, պետք է լինի **<u>«Էլքային հզորություն/Output power: 850VA»</u>**՝ «Մուտքային հզորություն/Input power: 850VA» փոխարեն:
<u>Հարց 7.</u> 9-րդ ապրանքը կոնկրետ ի՞նչ համակարգի հետ պետք է աշխատի: Եթե նա միայն միկրոֆոն է, ապա խնդրում եմ նշեք, թե ինչ համակարգի հետ է նա աշխատելու: Իսկ եթե պահանջվում է կոնֆերենս համակարգ, ապա նկարագրությունը էապես թերի է:	- Պահանջվում է **«Միկրոֆոն/Microphone»** ապրանքատեսակը, որը աշխատելու է համակարգչի հետ (հավանաբար Notebook-ի հետ, Windows 10 և բարձր սերնդի օպերացիոն համակարգով)
P.S. Կարծում ենք ընթացակարգը առանձին չափաբաժիններով կազմակերպելու դեպքում կունենաք էապես շատ մասնակիցներ և արդյունքում ավելի շատ գումար կտնտեսեք:	Մասնակիցը/Մատակարարը պետք է գնային առաջարկ ներկայացնի սույն Գնանշման Հրավերի (ԳՀ) տակ միավորված բոլոր կետերի համար՝ Գնային առաջարկները կգնահատվեն բոլոր այդ կետերի համար միասին, և պայմանագիրը կշնորհվի բոլոր կետերի համար միասին ամենացածր գնահատված ընդհանուր գին առաջարկած ընկերությանը /տես ԳՀ-ի 2-րդ հոդվածը/: